ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/194 «21» 05 2026 թ.

«ԷԼԻՏ ԲԱՍ» ՍՊ ընկերության տնօրեն
Գուրգեն Նիկողոսյանին

ՀՐԱՎԵՐ

ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայություններ**:

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ ՆԳՆ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«ԷԼԻՏ ԲԱՍ» ՍՊԸ -ն** ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Ձեզ է ուղարկվում **ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/Ս-28** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը, պայմանագրին կից որակավորման և պայմանագրի ապահովումները՝ տուժանքների տեսքով, ինչպես նաև իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը: